

**ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ
ԵՐԻՏԹՈՒՐ-ՔԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՁՈՒՄԻՑ ՀԵՏՈ
(1908-1910ԹԹ)**

Ավերիս Հարությունյան, Արշակ Բայան

Երիտթուրքական հեղաշրջումից հետո Վանի նահանգում շարունակում էր պաշտոնավարել նախկին նահանգապետ Ալի Ռիզան: Սակայն 1908թ. օգոստոսին Վանի նոր կուսակալ է նշանակվում ծագումով ալբանացի Մահմուդ-Խայրի փաշան, որը մինչ այդ նահանգի զինվորական հրամանատարն էր և դեռևս 1908թ. հունվար – փետրվարին՝ դաշնակցական Դավոյի դավաճանության և Վանի զինապահեստների հայտնաբերման լարված օրերին, մեծ դեր էր խաղացել հարյուրավոր հայերի փրկության գործում: Ահա թե ինչպես է նրան բնութագրում Վ. Փափագյանը. «Երկճիւղ երկար մօրուքով, տարիքոտ, բարեժպիտ, թոյլ և անվարչագէտ մէկը, թէ՛ մեր հանդէպ բարի և լայնամիտ: Սահմանադրական առաջին օրերուն խեղճը գլուխը կորսնցուցած էր. մեզմէ կը տեղեկանար իրար հրմշտկող դէպքերու մասին. մեզմէ խորհուրդ կը հարցնէր իր ընելիքներու և բռնելիք դիրքին նկատմամբ: Բայց կը զգար որ իր օրերը համրուած էին, միշտ դժգոհութիւնները և գանգատները մեզի կը վստահէր - դժգոհութիւններ կեդրոնի անհաստատ և անվճռական քաղաքականութեան և դէպի երկրի փոքրամասնութիւնները յարուցուած նեղմիտ և անհանդուրժող վերաբերմունքին առթիւ: Թէ՛ մի թիրքական պաշտոնեայ, բայց Ալպանացի հայրենասէր մըն էր և չէր ծածկեր, որ իր հայրենիքը անջատուած կ'ուզեր տեսնել թիրքերէ. «ասոնք մարդ դառնալիք չունին», կ'ըսէր...»¹:

Մահմուդ-Խայրիի կարճատև պաշտոնավարումից հետո 1908 թ. հոկտեմբերին նահանգի նոր կուսակալ է նշանակվում Ֆերիտ փաշան², որը մինչ այդ եղել էր Օսմանյան առաջին խորհրդարանի անդամ, սա-

¹ Փափագեան Վ., Իմ յուշերը, հատոր երկրորդ, Պէրոյթ 1952, էջ 27:

² Ֆերիտ փաշայի մասին ավելի հանգամանորեն տե՛ս https://en.wikipedia.org/wiki/Damat_Ferid_Pasha

կայն իր ազատական հայացքների համար 20 տարուց ի վեր արքայազն էր եղել Ֆիզա (Աֆրիկա)՝:

Ֆերիտից հետո Վանի կուսակալությունը ժամանակավոր պաշտոնակատարի կազավիճակով կառավարում է նրա տեղակալը՝ Յավեր փաշան², որի օրոք սրվում են հարաբերություններն իր և նահանգի զինվորական հրամանատարի միջև: Կուսակալի մի հեռագրից պարզվում է, որ նա զինվորական հրամանատարի հետ գժտվել էր այն բանի համար, որ վերջինս իր հայացքներով «reactionnaire» էր և իրեն համարում էր կուսակալի հակառակորդը³:

1908թ. հուլիսյան հեղաշրջումից հետո՝ առաջիկա 9 ամիսների ընթացքում, Վանի նահանգում վիճակը կարծես թե տանելի էր: Այդ առիթով Գ. Ջոհրապը գրում է. «Վան, Կարին, Բաղէշ, Խարբերդ, Մուշ, անդորրութիւն կը տիրէ. հայահալած քաղաքականութիւնը իրապէս վերցած է. հարկաւ տեղ տեղ անհատական դէպքեր կը պատահին տակաւին. բայց երկրին ո՞ր մասին մէջ արդեօք այդ տեսակ դէպքեր չեն պատահիր. բոլոր հայաբնակ գաւառները, օսմանեան համերաշխութեան անկեղծապէս կուսակից և հետեւապէս «հայասէր» վալիներ խրկուած են և անոնք կը պահապանուին իրենց պաշտօնին վրայ, հակառակ կարգ մը դաւերու: Զինուորական հրամանատարը՝... հեռացուեցաւ այդ կողմերէն...Այդ գաւառներուն մէջ և Թուրքիոյ ամէն քաղաքներու մէջ՝ հայերը իրենց գործովը, առուտուրովը, ազատօրէն կը զբաղին, դրամ կը շահին, պաշտպանութիւն կը վայելեն, յարգանք կը տեսնեն կառավարութենէն: Նոյնիսկ Սուլթան Մահմուտի, Ապտիւլ Մէճիտ և Ապտիւլ Ազիզ կայսրերուն օրով այս աստիճան բարօրութիւն տեսած չէին»⁴:

Միակ անհանգստացնող հանգամանքն այն էր, որ արդեն որերորդ տարին նահանգում պարբերաբար տիրում էր սովը: Այդ մասին մենք տեղեկանում ենք Ռ. Զարդարյանի 1908թ. դեկտեմբերի 27-ի հաղորդագրու-

¹ Տե՛ս «Գործ», Թիֆլիս, 1908 թ. հոկտեմբերի 25, թիւ 38:

² Յավերը թուրք-պարսկական 1905-1908թթ. հակամարտության ժամանակ վարում էր թուրքական զինվորական ընդհանուր հրամանատարի պաշտոնը: Նա էր, որ 1904թ. ոմբակոծեց և 12 նավերով պաշարեց Աղթամարը՝ յոթ հայ ֆիդայի-հեղափոխականներին բռնելու համար: Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1909 թ., օգոստոսի 8, թիւ 6:

³ Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1909 թ. մայիսի 2, թիւ 91:

⁴ **Ջոհրապ Գ.**, Հայ պատգամատրի մը հաշուետուութիւնը (հեղինակի նկարով), Կ.Պոլիս-Սկիւտար, 1910, էջ 18-19:

թյունից, ըստ որի 1908/1909թ. ծնունդը Վանի նահանգում 12 հազ. մարդ սոված էր, նրանցից շատերը մահանում էին սովից և ծյուրումից, իսկ Թիմարում մարդիկ ճարահատյալ սնվում էին թեփով և կտավատով¹:

Սակայն վատթար իրավիճակը միայն դրանով չէր պայմանավորված: Աբդուլհամիդյան 1909 թ. մարտի 31-ի պետական հեղաշրջման և Ադանայի 1909թ. ապրիլյան կոտորածների ժամանակ ի հայտ եկան այն հակասությունները, որ գոյություն ունեին օսմանյան հին և նոր վարչաձևերի միջև: Միաժամանակ, հայությունը համոզվեց, որ «բորենիին դեմ բազմագլուխ հիդրա մը ցցուած կը տեսնէր իր առջև՝ թոյնով ու ժանիքներով զինված», որ «թուրքն՝ ծեր թե ժէոն՝ նոյն գայլն է քանասարիկ»² և, որ իթթիհատն արդեն իսկ «հագել» էր սուլթանի պատմուճանը: 1909թ. մարտի 1-ին Վանում հրատարակվող «Հորձանք» շաբաթաթերթի էջերում Արամ Մանուկյանը դժգոհում էր, որ իթթիհատը հրաժարվում էր ճանաչել «մանր» ազգերի գոյությունը, քանի, որ բոլորին համարում էր «օսմանի»³:

Վանի նահանգում տիրող ընդհանուր խառնաշփոթության պայմաններում, երբ Ադանայից ստացվում էին կոտորածի և ահաբեկման լուրեր, 1908թ. հեղաշրջման ժամանակ զինաթափված Վանի հայությունը ևս սուսկալի կոտորածի պիտի ենթարկվեր, եթե 1909 թ. ապրիլի 7-ին ձյան տեղատարափը թուրքերին «իրենց որջերուն մէջ չ'արգիլափակեր» և, եթե Թայար բեյը հանրահավաք գումարելով «մոսկոֆեան վրէժխնդրաթեան ահացուցիչ հեռանկարով» չսաստեր «կարմիր խուժանի» գազանային ախորժակները⁴:

Սակայն ընդամենը մի քանի օր անց՝ ապրիլի 10-ին, սուլթանի կողմնակիցները՝ Այգեստանի 70 թուրք զինվորականներ, լսելով մայրաքաղաքում կատարված նոր հեղաշրջման և Ադանայի դեպքերի մասին, ըմբոստացան իրենց սպաների դեմ, զինվեցին, «կեցցե՛ սուլթանը, կորչի՛ սահմանադրությունը», «կորչի՛ ազատությունը, մենք ցանկանում ենք միայն շարիաթ» խժալուր աղաղակներով մտան քաղաք և պարտավորեցրին բազմաթիվ հայերի ցած իջնել կառքերից և խոնարհվել իրենց ա-

¹ Տե՛ս **Զարդարեան Ռ.**, Յօդուածներ, Իսթանպուլ, 2015, էջ 79:

² **Երամեան Յ.**, Յուշարձան Վան-Վասպուրականի, հ.Բ, Ալեքսանդրիա, 1929, էջ 101, 105:

³ «Հորձանք», Վան, 1909թ., թիվ 4, էջ 84:

⁴ Տե՛ս **Երամեան Յ.**, Յուշարձան Վան-Վասպուրականի, հ.Բ, էջ 105:

ոչև¹: Նրանք միանալով քրդական ցեղապետեր՝ «Քյոռ» Հյուսեինին, Շաքիր աղային, Միր Մհեին, Սեիդ Ալին և ուրիշներին, պատրաստվեցին կոտորածի: Իմանալով այդ մասին քաղաքի շուրջ 7000 հայեր հավաքվելով նահանգապետ նանՅավեր փաշայի բնակարանի մոտ՝ պահանջեցին կանխել իրենց գլխին կախված վտանգը: Սակայն կուսակալը միայն խոստումներով հանգստացրեց հայերին:

Վանեցիները վախենալով նոր անկարգություններից, հաջորդ մի քանի օրերի ընթացքում փակեցին քաղաքի շուկան, որովհետև ապրիլի 13-ին նախատեսվում էր հարձակում շուկայի վրա, որն էլ ազդանշան պետք է հանդիսանար Վանում՝ Ադանայի նման նոր ջարդեր սկսելու համար: Սակայն ապրիլի 14-ին, երբ հայտնի դարձավ երիտթուրքերի կողմից Կ. Պոլսում սուլթանի նստավայրը՝ «Երլդըզըն» («Աստղ» – Ա. Հ.) գրավելու և Աբդուլ Համիդին երկրորդ անգամ գահընկեց անելու մասին, Վանում կոտորածի սպառնալիքը վերացավ:

Ապրիլի 15-ին Վան հասավ նաև իշխանափոփոխության հեռագիրը, որը կարծես թե սգի մեջ թողեց նահանգի թուրքերին և քրդերին²: Նույն օրը Սարայ գավառի քրդական ավազակախմբերը, որոնք բացարձակ անտեղյակ էին Կ. Պոլսում կատարված դեպքերին, Վանի թուրքական զորքերի օրինակով աղաղակելով «շարիաթ ենք պահանջում», խուժեցին Սարայի հեռագրատուն, հայիոյեցին և ծեծեցին տեղի հայերին, փակեցին այնտեղի երիտթուրքական կոմիտեի ակումբն ու հայերի ընթերցասրահը, մինչև որ լսելով կատարված նոր իրադարձությունների մասին՝ հանդարտվեցին:

Հաջորդ օրը՝ ապրիլի 16-ին ավազակապետ Միր-Մհեն՝ իր 40 ավազակներով հարձակվեց Նորդուզ գավառի Կանգուառ գյուղի վրա, սպանեց յոթ հայերի և թալանի ենթարեց գյուղը, որովհետև նոր սուլթան Մեհմեդ V-ի գահակալության պատվին Վանում արձակված 101 թնդանոթների ձայներից նա եզրակացրել էր, որ քաղաքում հայերի կոտորածն արդեն իսկ սկսվել էր: Նույն օրն էլ ազգամիջյան ատելության մթնոլորտում երկու հայեր սպանվեցին, իսկ մեկն էլ վիրավորվեց Արճեշում³:

Վանի հայությունը, որը սահմանադրական կարգի հիմնական ար-

¹ АВПРИ РФ, ф. Политархив, 1909, оп.482, д.717, л.19:

² Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1909 թ. մայիսի 14, թիւ 100:

³ Տե՛ս անդ.:

տահայտիչն էր և պաշտպանը, հանդես էր գալիս նաև քաղաքական պահանջներով: Այսպես, 1909 թ. գարնանը, երբ Աբդուլ Համիդի փոխարեն սուլթան հռչակվեց Մեհմեդ V-ը, նրանք մայիսի 1-ին փակելով վարժարանները Վանում կազմակերպեցին հանրահավաք՝ «Մենք չենք գոհանա Համիդի փոխվելով ու Մուհամեդի նստելով, մենք պիտի ձգտենք թագերի կործանմանը» կարգախոսով: Այնուհետև, կանանց ու տղամարդկանց մի հոծ բազմություն շարժվեց դեպի Կարմրավորի վանք՝ մայիսի 1-ը՝ որպես աշխատավորության միջազգային օր տոնելու և դաշտահանդես կազմակերպելու համար: Հայերն առաջարկեցին թուրքերին միանալ իրենց պահանջին և մասնակցել մայիսմեկյան միասնական տոնակատարությանը, սակայն նրանց առաջարկը մնաց անպատասխան: Դեռ ավելին, Վանի մահմեդական ազգաբնակչության մեծամասնությունը՝ գտնվելով մոլեռանդ կրոնավորների ազդեցության ներքո, ոչ միայն անհամատեղելի էին համարում, որ իրենց կանայք ու աղջիկները դուրս գան հարեմներից և հայերի հետ միասին զբոսնեն քաղաքում, այլև թշնամաբար էին տրամադրված ընդհանրապես հայերի նկատմամբ՝ չթաքցնելով անգամ կետորածի իրենց բուն մտադրությունը՝ «ոչ այսպես չի լինի, հայերը՝ գեավուրները կատղել են, ուրեմն... պիտի կոտորել հայերին, կրկնել Կիլիկիայի ջարդերը»¹:

Կոտորածների այդ սպառնալիքը տարածայնվեց հայերի մեջ, որոնք էլ ապահովության համար դիմեցին Վանի Հայոց առաջնորդարանի օգնությանը, իսկ վեջինս էլ՝ իբրև ինքնապաշտպանության միակ տարբերակ, առաջարկեց կազմակերպել գյուղական պահակախմբեր՝ զինված պետական միջոցներով: Սակայն կուսակալի փոխանորդի անմիջական միջամտությամբ կոտորածի վտանգը կանխվեց և մի քանի թուրք սարիչներ բանտարկվեցին:

Սակայն վիճակը դրանից չփոխվեց: Հին վարչակարգի կողմնակիցները 1909 թ. մայիսի 4-ին նախատեսում էին նաև Ադանայի նման նոր խժոժություններ կազմակերպել Վանի շուկայում²: Ինչպես ժամանակի մամուլն էր նշում «մութ տարրերը ուզում են նոր ջարդերով վրեժխնդիր լինել Աբդուլ Համիդի գահընկալության համար»³, սակայն հայերը փակե-

¹ «Մշակ», Թիֆլիս, 1909 թ. հունիսի 6, թիւ 119:

² Տե՛ս Մատենադարան, ֆ.2, Կյուրեղ Սրապյանի արխիվ, ց.43, թղթ.82, վավ.1044, թ.1:

³ «Մշակ», Թիֆլիս, 1909 թ. հունիսի 6, թիւ 119:

ցին Վանի շուկան, որով ձախողվեց կոտորածի իրագործումը:

Օգտագործելով առոիթը Յավեր փաշան հալածանքներ սկսեց հայ կուսակցությունների ներկայացուցիչների՝ «իբրև ազգերի համերաշխություն վրդովողների» նկատմամբ, որովհետև Կ.Պոլսից ստացված հրամանի համաձայն անհրաժեշտ էր երկիրը մաքրել «ռեակցիոն» տարրերից¹: Արդյունքում, բանտարկվեցին Վանի Քաղաքային ժողովի ատենապետ՝ Նշան Քալջյանը և Աղթամարի Քաղաքային ժողովի անդամ-քարտուղար՝ Հովսեփ Խլղայանը: Առաջինը՝ առանց ապացույցների ամբաստանվեց որպես մայիսի 4-ին Վանի շուկան փակելու վրդովվեցույնի լուրերի տարածող և կազմակերպիչ, իսկ երկրորդը՝ որպես Գավաշի կայմակամի հասցեին զրպարտություններ սերմանող, երկրի ներքին անդորրությունը և օսմանյան ազգերի համերաշխությունը խոչընդոտող մի խռովարար²:

Նշան Քալջյանը Քաղաքային ժողովի ազդեցիկ և խելամիտ անդամներից մեկն էր, որը մասնագիտությամբ փաստաբան էր, լավ գիտեր թուրքերեն և չէր ենթարկվում կառավարության սադրանքներին: Իրականում նա համարձակություն էր ունեցել մերժելու կուսակալ Յավեր փաշայի մի շարք առաջարկություններն այն մասին, որպեսզի համաձայնագիր ստորագրվեր Վանի հայության և քուրդ ավազակապետ Հյուսեին փաշայի ու ոճրագործ որոշ ցեղապետերի միջև, որի հիման վրա տպավորություն ստեղծվեր, որ Վանի նահանգում իբր տիրում էր ներքին խաղաղություն և, որ թուրքերը, քրդերն ու հայերն ապրում էին հաշտ ու համերաշխ:

Յավերը Քաղաքային ժողովին առաջարկվել էր ստորագրել նաև մեկ այլ գրություն ևս, ըստ որի ինքը՝ որպես կուսակալի պաշտոնակատար և ելնելով օսմանյան հայրենիքի ընդհանուր շահերից, իբր հաջող էր կառավարում նահանգը և առաջիկայում կարող էր հավակնել նահանգապետի պաշտոնին: Այդ մերժումներին զուգահեռ Վանի Քաղաքային ժողովը հանդգնել էր նաև բողոքել Յավեր փաշայի այն արարքի դեմ, որ նա ժողովի անդամների ներկայությամբ համբուրել էր Մանդան գյուղի հարստահարիչ և ոճրագործ Սայիդ բեյի ճակատը:

Յավերն այդ ամենի պատճառը համարում էր Քաղաքային ժողովի ինքնուրույն և անհնազանդ գործունեությունը և իր վրեժն ուզում էր լուծել

¹ Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1909 թ., օգոստոսի 8, թիւ 6:

² Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1909 թ. հուլիսի 5, թիւ 144:

բանտարկել տալով նրա ազդեցիկ անդամներին: Թուրքական դատարանը, որը սահմանադրությամբ անկախ էր հռչակված գործադիր իշխանությունից, ակամայից գործիք է դառնում Յավեր փաշայի նենգությանը:

Հայադավ գործելաճի ընդհանուր համատեքստում Յավերի կուսակալության օրոք հալածանքների ենթարկվեցին նաև դոկտոր Հովսեփ Դավթյանը և «Ազատամարտ»-ի խմբագիր Արշակ Վռամյանը¹, որն ի դեպ Ադանայի կոտորածներից և Վանի խառնիճաղանճ դեպքերից հետո էլ դեռևս իթթիհատի հետ համագործակցության հույսեր էր փայփայում: «Биржевые ведомости»-ի և «Русские ведомости»-ի թերթերի ռուս լրագրող և գրող Արիսդնա Տիրկովայի հետ զրույցի ժամանակ նա համոզմունք էր հայտնում, որ. «այո, իհարկե, իթթիհատը շատ սխալներ ունի, բայց երկա՞ր ժամանակ է, որ նրանք իշխանության գլուխ են: Մի մոռացեք, թե ինչ ահավոր ժառանգություն են նրանք ստացել համիդյան վարչակարգից: Նրանք ձգտում են հաստատել օրինականություն: Համենայն դեպս, նրանց հարկավոր է համարել սահմանադրության անկեղծ բարեկամներ: Եթե դուք իմանայիք, թե ինչ ահավոր լծի տակ էր ապրում երկիրը մինչև հեղափոխությունը: Եվ հետո, երիտթուրքերի մեջ կան արդար մարդիկ, որոնց վրա կարելի է հենվել: Դրանցից են՝ ներկա խարհրդարանի նախագահ Ահմեդ Ռիզա-բեյը, Հյուսեին Ջավիդը, և վերջապես Թալաաթ բեյը, որը կրթություն չունեի, սակայն բոցաշունչ և արդար հայրենասեր էր, նա հասկանում է, որ Թուրքիայի փրկությունը բարենորոգումների մեջ է»: Ա. Տիրկովայի այն հարցին, թե ո՞րն է հայ ժողովրդի փրկությունը, չէ՞ որ Ադանայում կազմակերպվել էր կոտորած և ո՞վ կարող է երաշխավորել, որ այն չի կրկնվի, Ա. Վռամյանը կտրուկ և շտապ պատասխանում է. «Ո՛չ, ո՛չ, դա չի կարող կրկնվել, Ադանայի կոտորածները հին վարչակարգի մնացորդն էր: Իթթիհատն ինքն էր վրդովված: Նրանք ամեն ինչ արեցին...»²:

Հետագայում երիտթուրքերի գլխավոր ղեկավարը՝ Թալեաթը, որին Ա. Վռամյանը համարում էր ամենաազնիվ և մաքուր մարդկանցից մեկը, դարձավ հայ ժողովրդի դահիճը և հենց Ա. Վռամյանին ու նրա կուսակցական ընկերներին ոչնչացնողը:

¹ Տե՛ս «Կոհակ», 1909 թ. օգոստոսի 15, թիւ 12, էջ 139:

² **Тыркова А.**, Старая Турция и младотурки. Годъ въ Константинополе, Петроградъ, б.м. и г. с.76.

Այդուհանդերձ, Յավերի պաշտոնավարման շրջանում որոշ միջոցառումներ իրականացվեցին անօրինականություններն ու անարդարությունները հաղթահարելու ուղղությամբ: Այսպես, երբ Գավաշի կայմակամի հակահայկական արարքների դեմ բողոքում է Աղթամարի կաթողիկոսական տեղապահ Հովսեփ եպիսկոպոս Սարաճյանը, կառավարությունը խնդիրը քննելու համար ստեղծում է մի քննիչ հանձնաժողով, որի անդամներից մեկն էր նաև Վանի առաջնորդական տեղապահ Զավեն վարդապետը¹:

Բացի այդ, Յավերի օրոք Վանի նահանգի թուրք զինվորականության նախաձեռնությամբ փաստեր հավաքվեցին և խիստ քննության ու դատապարտման ենթարկվեցին նահանգի կաշառակեր բոլոր պաշտոնյաները: Մեղադրանքներից զերծ չմնաց նաև Արճակի մյուդիրը, որը 1908թ. Դավոյի դեպքերի և Վանի խուզարկության օրերին պատուհաս էր դարձել գավառի ողջ հայության գլխին²: Արդյունքում մեծ քանակությամբ զեղծ և անկարող պաշտոնյաներ վտարվեցին: Դժբախտաբար, Վանի հայերի մեջ չգտվեցին թուրքերենի բավականաչափ իմացությամբ համապատասխան գիտականեր, որոնք կարողանային ստանձնել թափուր պաշտոնները:

1909 թ. հուլիսի սկզբին Յավերի փոխարեն³ Վանի նոր կուսակալ է նշանակվում ծագումով օսեթ Բեքիր Սամի բեյը, որը ստացել էր եվրոպական կրթություն և ավելի շատ վարժ էր ֆրանսերենի, քան թուրքերենի իմացության մեջ⁴:

¹ Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1909 թ. հուլիսի 5, թիւ 144:

² Տե՛ս «Գործ», Թիֆլիս, 1908 թ. սեպտեմբերի 14, թիւ 4:

³ Հետագայում Յավեր փաշան մասնակցեց 1912թ. Բալկանյան պատերազմներին և գերևարվեց: Տե՛ս <http://www.lostbulgaria.com/?p=2835>, նաև http://bolgari.org/sad14_11_1912g_%E2%80%93makedono_odrinskoto_opylchenie_plenia_va_10_xiliadniiia_korpus_na_iaver_pasha_v_belomorieta-e-585.html:

⁴ Բեքիր Սամի բեյը (Կունդուխը) (1865-1933) ռուսական բանակի նախկին գեներալ-մայոր, ապա Էրզրումի բանակի հրամանատար Մուսա Կունդուխ Կունդուխով փաշայի (1818-1889) որդին էր, որը հետագայում անցավ Օսմանյան Թուրքիայի կողմը: Կ. Պոլսի մոտ գտնվող Գալաթասարայ կղզու միջնակարգ դպրոցում բակալավրիատի աստիճան ստանալուց հետո, Բեքիր Սամին սովորել է Փարիզի քաղաքական գիտությունների դպրոցում, վարել Պետերբուրգում Օսմանյան Թուրքիայի դեսպանատան քարտուղարի, Մայթայում Օսմանյան Թուրքիայի հյուպատոսի, Ամասիայի կառավար-

Ընդհանուր առմամբ նա բարյացակամ վերաբերմունք ուներ նահանգի հայերի նկատմամբ: Քիչ չէին դեպքեր, երբ նրա օրոք իթթիհատականները Վասպուրականում «օրինականության» հաստատման ճանապարհին փորձում էին ձեռք բերել հայերի վստահությունը: Այսպես, երբ 1909 թ. հուլիսի 8-ին Արճեշում իր այգում սպանվեց արհեստավոր Տիգրան Հյուսնյանը, հանցագործության հինգ ոճրագործներից երեքը, որոնց մեջ էր նաև Արճեշի «պելեդիեին» (գրագիրը - Ա. Հ.)՝ Իսմայիլ էֆենդին, իսկույն ձերբակալվեցին¹:

Առաջնորդվելով նույն գործելաոճով, կուսակալը մեկ այլ առիթով հենագրում է Բաշկալեի մյութեսարիֆին՝ պահանջելով որպեսզի նա պատասխանատվության ենթարկի Գավառի կայմակամին՝ հայերի նկատմամբ իրականացրած իր հարստահարությունների համար²:

Իսկ 1909 թ. սեպտեմբերին, երբ Ալջավազի գավառակում սպանվում են 6 հայեր, Վանի նորանշանակ վալին շուտափույթ բացահայտում է սպանությունը՝ ձերբակալելով 12 ոճրագործներին³:

Նահանգի տարածքում հանցագործությունները կանխելու և խաղաղություն հաստատելու նպատակով Բեքիր Սամին Սարայի շրջանում արգելում է զենքի ու վառոդի մաքսանենգությունը⁴՝ հավաքելով համիդիեների ձեռքում գտնվող 600 հրացաններից 260-ը⁵:

Բեքիր Սամիի պաշտոնավարման ընթացքում տարբեր հարցերում նրա հետ համագործակցում և նրան մեծապես օժանդակում էր Վանում գտնվող նրա ազատամիտ ազգական՝ գնդապետ Ֆուադ բեյը:

Նորանշանակ կուսակալի կառավարման շրջանում կատարվում են

չի, Վանի, Տրապզոնի, Բուրսայի, Հալեպի և Բեյրութի վալիի (նահանգապետ) պաշտոնները: 1920թ. մայիսի 3-ին նա նշանակվել է քենալական Թուրքիայի արտաքին գործերի առաջին նախարար, իսկ 1921 թ. փետրվար - մարտին ղեկավարել թուրքական պատվիրակությունը Մոսկվայի և Լոնդոնի բանակցություններում: (տես «Մշակ», Թիֆլիս, 1909 թ. նոյեմբերի 12, թիւ 251 նաև

https://buildwiki.ru/wiki/Bekir_Sami_Kunduh, նաև https://ru.wikipedia.org/wiki/Кундух,_Бекир_Сами):

¹ Տե՛ս «Հայրենիք», Կ.Պոլիս, 1909 թ., օգոստոսի 11/24, թիւ 1448:

² Տե՛ս «Հայրենիք», Կ.Պոլիս, 1909 թ., օգոստոսի 11/24, թիւ 1448:

³ Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1909 թ. նոյեմբերի 12, թիւ 251:

⁴ Տե՛ս Աւետաբեր, Կ.Պոլիս, 1908 թ., հոկտեմբերի 24, թիւ 43:

⁵ Տե՛ս «Գործ», Թիֆլիս, 1909 թ. մարտի 24, թիւ 62:

Վանի օտարերկրյա հյուպատոսների նոր նշանակումներ: 1909 թ. ամռան վերջերին պաշտոնանկ են արվում Վանի ռուսական, ֆրանսիական և անգլիական հյուպատոսները: Այսպես, Վանում Ռուսաստանի հյուպատոս Ա. Տերմենի փոխարեն նոր հյուպատոս է նշանակվում հայասեր Սերգեյ Պետրովիչ Օլֆերևը, որը սրամիտ և ճարպիկ դիվանագետ էր և իր կապերով մեծ հեղինակություն էր վայելում Օսմանյան Թուրքիայում: Նա չորս տարի՝ մինչև 1913թ. հաջողությամբ կատարում է «հայոց պաշտպանի» իր առաքելությունը: Այն ժամանակ, երբ Ռուսաստանում այդ թվականներին հալածում էին դաշնակցականներին, Վանի դաշնակցության ղեկավարությունն իր անմիջական պաշտպանությունն էր գտնում Ս. Պ. Օլֆերևի կողմից¹: Անտարակույս, նա շարժվում էր ցարական կառավարության հրահանգներով և Արևմտյան Հայաստանում իրականացնում էր իր պետության արտաքին քաղաքական միտումներին հարիր քաղաքականություն՝ չթաքցնելով նաև իր հայանպաստ վերաբերմունքը:

Ֆրանսիական հյուպատոս Քալվիերին փոխարինում է դաժան բնավորության տեր մի անձնավորություն, որը չկարողանալով տանել հայ եկեղեցու ժամկոչի կոչնակների ձայնը և չհամակերպվելով Վանի տեղական պայմաններին, մեկուկես տարի պաշտոնավարելուց հետո հեռանում է Վանից: Նրա փոխարեն Վանի ֆրանսիական նոր հյուպատոս է նշանակվում լեհական ծագում ունեցող թուրքամոլ հրեա Ս.Զարգելին, որը վարում էր Ս. Օլֆերևին հակառակ քաղաքականություն:

Եվ վերջապես անգլիական նոր հյուպատոս է նշանակվում կապիտան Սիլը²:

Փոփոխություններից անմասն չեն մնում նաև Վանի հասարակական հարաբերությունները: Քաղաքային ժողովը, որի անդամների մեծ մասը դաշնակցականներ էին, ատենապետ են ընտրում Էջմիածնի երբեմնի միաբան՝ վանեցի Տաճատ (Կարապետ) վարդապետ Մելքոնյանին, որը միաժամանակ վարում էր ծխական դպրոցների ընդհանուր տեսուչի պարտականությունները:

Հաջող էր գործում նաև Վանի թեմական վարչությունը՝ Վանի առաջ-

¹ Ռուս նշանավոր դիվանագետ, արևելագետ և գրականագետ Ս. Պ. Օլֆերևի (Ս. Վեգին) (1875-1942) մասին ավելի մանրամասն տե՛ս http://nlr.ru/nlr_history/persons/info.php?id=1121:

² Տե՛ս **Երամեան Յ.**, Յուշարձան Վան-Վասպուրականի, հ.Բ, էջ 133-135:

նորդական փոխանորդ Հովսեփ եպիսկոպոս Սարաճյանի գլխավորությամբ: Վերջինս այդ պաշտոնում շարունակելով Սարգիս Բարսեղյանին, վարում էր բավականին հեռատես քաղաքականություն և համերաշխ էր Քաղաքային ժողովի ատենապետության հետ: Նախկին «ջոջերի» այն հարցին, թե ինչո՞ւ էր Հ. Սարաճյանը սերտ համագործակցում դաշնակցականների հետ, նա պատասխանում է. «Վան հասած ատենս այդ մարմինը ընտրուած գտայ ազգին կամքով և ես պարտաւոր եմ համակերպիլ այդ գերագոյն կամքին, պատճատ մ'ալ չունիմ դժգոհելու վարչութեան ընթացքէն»¹:

1910 թ. մայիսին Վանի առաջնորդական նոր տեղապահ Մեսրոպ քահանա Ճանիկյանի հրավերով, Պետրոս և Սեթ Գափամաճյանների, Իզնատոսի, Հ. Երամյանի և այլ ներկայացուցիչների մասնակցությամբ առաջնորդարանում գումարված ժողովի ժամանակ Վարչական ժողովի ատենապետ է ընտրվում Պետրոս Գափամաճյանը: Միաժամանակ, նա ստանձնում է Վարագա վանքի հոգաբարձության ատենապետի պաշտոնը: Վերջինիս գլխավորությամբ մի քանի ամիս անց Վանում հիմնադրվում է բարեգործականի մասնաճյուղը, որը մեծապես նպաստում է նահանգի գյուղերում դպրոցական ցանցի ընդարձակմանը:

Աղանայի կոտորածներից հետո և մասնավորապես Բեքիր Սամիի պաշտոնավարման շրջանում Վանի հայությունը սթափվելով հեղափոխական պատրանքներից՝ պարզորեն տեսնելով իթթիհատի իրական դեմքը, քանի որ ճշմարիտ պատկերացումներն այլ էին: Երիտթուրքերը չստեղծեցին բնակչության անձի և գույքի ապահովություն: Կայսրության գրեթե բոլոր շրջաններում և առավելապես Վանում, առաջվա նման նորից սկսեց իշխել բռնությունն ու կամայականությունը, կողոպուտն ու թալանը:

Վանում նորից արթնացավ համիդյան շրջանի կարգախոսը և վերսկսվեցին հայերի դեմ բանտային հալածանքներն ու դատարանական մարտավարության հին ձևերը: Ինչպես ժամանակի մամուլն է արձանագրում «...որքան Պոլսոյ մէջ կը ջանացուի Կառավարութեան սահմանադրական երեւոյթ տալ, նոյնքան տեղս կաշխատուի ատոր հակառակն ընել ճարտարօրէն քողարկուած միջոցներով»²:

1910 թ. հունիսի 22-ին Վանի ռուսական հյուպատոսը հաղորդում էր,

¹ Անդ., հ.Բ, էջ 136:

² «Կոհակ», Կ.Պոլիս, 1909 թ. օգոստոսի 29, թիւ 14, էջ 164:

որ հայերը խաբվելով իրենց ակնկալություններից, զայրույթով են արտահայտվում թուրքական կառավարության ու սահմանադրության հասցեին¹, իսկ «կառավարութիւնը այս անգամն ալ ցոյց տուաւ մուսուլմանական կողմնակալութիւն»²:

Այդ ամենի տրամաբանական արդյունքը եղավ այն, որ 1910 թ. հունիսի 30-ին Վանի Արարուց հրապարակում իշխանությունների դավադրության զոհ դարձավ դաշնակցության զինվորական շարքի ամենահանդուգն դեմքերից մեկը՝ «Ծուռ Դավիթը»՝ Դավիթ Թումանյանը³:

Բեքիր Սամիի կառավարման օրոք տեղի ունեցած կարևոր իրադարձություններից էր Օսմանյան խորհրդարանի Վանի պատգամավորների կարճատև տունդարձը և նրանց հանդիպումն ընտրողների հետ: 1910 թ. օգոստոսի 14-ին Մալխասի (Արտաշես Հովսեփյան) հետ միասին Կ.Պոլսից՝ Կարինի վրայով Վան վերադարձավ Օսմանյան խորհրդարանի Վանի պատգամավոր Վահան Փափազյանը, որը միաժամանակ Կ. Պոլսի Ազգային երեսփոխանական ժողովի Վանի թեմի անդամ էր: Օգոստոսի 29-ին և սեպտեմբերի 5-ին կենտրոնական դպրոցի սրահում կազմակերպված հրապարակային ժողովի ժամանակ Վ. Փափազյանը երկու զեկուցում կարդաց, որոնցից առաջինը նվիրված էր Օսմանյան խորհրդարանի գործունեությանը և իր կատարած աշխատանքներին, իսկ երկրորդը՝ Հայոց ազգային երեսփոխանական ժողովին: Նոր երևույթ էր, երբ պատգամավորը, հայրենիք վերադառնալով, հաշիվ էր տալիս իր ընտրողներին և ազատ խոսում էր եղած խնդիրների մասին⁴:

¹ Տե՛ս ԱԳԻԱ Ք.Գրչուի, ֆ.521, օր.2, ժ.492, լ.234:

² «Գործ», Թիֆլիս, 1909 թ. ապրիլի 7, թիւ 70:

³ Դավիթ Թումանյանը բնիկ այջավազցի էր, անգրագետ, բայց շատ զգացմունքային գործիչ: Նա ՀՅԴ-ին հարել է 1890-ական թվականների կոտորածների նախօրյակին՝ միաժամանակ համագործակցելով Պետոյի (Ալեքսանդր Պետրոսյան) և Վազգենի հետ: 1897թ. Խանասորի արշավանքի ժամանակ Դավիթ Թումանյանը Տաշոյի (Հովսեփ Արղույան) զինատար խմբի հետ շարժվում է Վան: Սակայն Բաշկալեում նա ձերբակալվում է և դատապարտվում կախաղանի, որը շուտով փոխարինվում է համաներման: Դավիթը տեղափոխվում է Վան և զբաղվում պայտագործությամբ՝ սերտ կապեր պահպանելով Վան տեղափված Վարդգեսի (Վարդգես Սերենկյուլյան) հետ: Նա ահաբեկել է Վարդգեսին դավաճանած Խաչիկ Սեմերճյանին: Դավիթ Թումանյանը մասնակցել է 1905 թ. հայ-թաթարական ընդհարումներին, որից հետո՝ 1908 թ. նորից տեղափոխվել է Վան: Տե՛ս «Դրօշակ», Ժնեւ, 1912 թ., հունիս, թիւ 6, էջ 149-152:

⁴ Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1910 թ. սեպտեմբերի 24, թիւ 210:

Վ. Փափագյանից ութ օր առաջ Վան էր վերադարձել նաև Վանի թուրք պատգամավոր՝ Թեֆիկ բեյը, որի պատվին մեծ ընդունելություն կազմակերպեցին Վանի քաղաքապետը՝ իր պաշտոնակիցներով, հայոց հոգևոր առաջնորդը, Վանի բոլոր հայտնի մեծահարուստները և ժողովրդի բավական ստվար մի բազմություն: Նա հաշվետվություն ներկայացրեց իր կատարած գործունեության մասին և այցելեց կուսակալին, որի նպատակն էր ուսումնասիրել Վանա և Արճակի լճերի շրջակայքը, որտեղ ջրի մակարդակի բարձրացումով մեծ վնասներ էր հասցվել շրջապատին:

Նահանգապետ Բեքի Սամիի օրոք 1909թ. հուլիսի 27-ին հրապարակվեց և 1910թ. օգոստոս-սեպտեմբերին գործողության մեջ դրվեց գինապարտության մասին մի նոր օրենքը, ըստ որի Օսմանիան կայսրության պատմության մեջ առաջին անգամ 20-40 տարեկան օսմանյան քրիստոնյա քաղաքացիները ենթարկվում էին զորակոչի, իրավունք էին ստանում զենք կրել և ծառայել օսմանյան բանակում¹:

Այսպիսով, 1908թ. օգոստոսից մինչև 1910թ. աշուն Մահմուդ-Խայրի, Ֆերիտ, Յավեր, Բեքիր Սամի փաշաների օրոք Վանի նահանգում վիճակը կարծես թե տանելի էր: Նրանց օրոք որոշակի միջոցառումներ իրականացվեցին անօրինականությունների և անարդարությունների հաղթահարման ուղղությամբ, խիստ քննության ու դատապարտման ենթարկվեցին նահանգի կաշառակեր պաշտոնյաները: Սակայն շուտով ի հայտ եկան հակասությունները հին և նոր վարչաձևերի միջև: Քանի որ արևմտահայությունը սահամանդրական կարգերի հիմնական արտահայտիչն էր և պաշտպանը, Վանում նորից սկսեցին իշխել բռնությունը, կամայականությունը և հալածանքը: Ադանայի կոտորածների օրինակով 1909թ. ապրիլի 7-ից մայիսի 4-ը խժժություններ կազմակերպվեցին նաև Վանում, և հալածանքներ սկսվեցին հայ կուսակցական գործիչների նկատմամբ: Վանի հայությունը սթափվեց հեղափոխական պատրանքներից և զգաց իթթիհատի իրական դեմքը:

¹ Այդ մասի ավելի մանրամասն տե՛ս Ա. Հարությունյան, Քրիստոնյաների գինապարտության մասին օրենքի գործադրումը Վանի նահանգում և դրա հետևանքները տեղի հայ բնակչության համար, «Հայկական բանակ», ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի ռազմագիտական հանդես, 2021թ., թիվ 4, էջ 41-49:

Բանալի բառեր՝ Վանի նահանգ, Ալի Ռիզա, Մահմուդ Խայրի փաշա, հասարակական-քաղաքական կյանք, Ֆերիտ փաշա, Յավեր փաշա, Բեքիր Սամի բեյ, Դավիթ Թումանյան:

ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКАЯ ЖИЗНЬ АРМЯН ВАНСКОЙ ГУБЕРНИИ ПОСЛЕ МЛАДОТУРЕЦКОГО ПЕРЕВОРОТА (1908-1910)

Аветис Арутюнян, Аршак Бальян

Ключевые слова: Ванская провинция, Али Риза, Махмуд Хайри Паша, общественно-политическая жизнь, Ферит Паша, Явер Паша, Бекир Сами бей, Давид Туманян.

С августа 1908 года по осень 1910 года, во время правления Махмуда Хайри, Ферита, Явера, Бекира Сам-паши, положение в провинции Ван казалось сносным. Во время их пребывания в должности были приняты определенные меры по борьбе с беззаконием и несправедливостью, а коррумпированные государственные чиновники были подвергнуты строгому расследованию и осуждены. Но вскоре возникли противоречия между старым и новым режимами. Поскольку армяне Армении были главными выразителями конституционного строя, в Ване снова воцарились защитники, насилие, произвол и преследования. После резни в Адане с 7 апреля по 4 мая 1909 года в Ване вспыхнули беспорядки и начались преследования армянских партийных деятелей. Армяне Вана отрезвились от революционных иллюзий и почувствовали настоящее лицо иттихада.

SOCIO-POLITICAL LIFE OF THE ARMENIANS OF VAN PROVINCE AFTER THE YOUNG TURK COUP (1908-1910)

Avetis Harutyunyan, Arshak Balyan

Keywords: Van province, Ali Riza, Mahmoud Khayri Pasha, social - political life, Ferit Pasha, Yaver Pasha, Bekir Sami Bey, David Tumanyan.

From August 1908 to the autumn of 1910, during the reigns of Mahmud Khayri, Ferit, Yaver, Bekir Sam Pasha, the situation in Van province seemed to be tolerable. During their tenure, certain measures were taken to tackle lawlessness and injustice, and state corrupt officials were severely investigated and convicted. But contradictions between the old and the new regimes soon arose. As the Armenians of Armenia were the main exponent of the constitutional order, the

defender, violence, arbitrariness and persecution began to reign in Van again. Following the Adana massacres, from April 7 to May 4, 1909, riots broke out in Van, and persecution of Armenian party figures began. The Armenians of Van sobered up from the revolutionary illusions and felt the real face of ittihad.

Ավերիս Հարությունյան – պատմ. գիտ. թեկն., ՀՊՄՀ-ի Հայոց պատմության ամբիոնի դոցենտ

Аветис Арутюнян - кандидат исторических наук, доцент кафедры истории Армении Армянского Государственного Педагогического Университета имени Хачатуря Абовяна

Avetis Harutyunyan – PhD of Historical Sciences, associate Professor at Armenian history department of Armenian state pedagogical university after Kh. Abovyan

Արշակ Բալյան – պատմ. գիտ. թեկն., ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի Հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոնի դոցենտ

Аршак Балян - кандидат исторических наук, доцент кафедры Истории Армянской церкви и Эклесиологии ЕГУ Факультета Богословия

Arshak Balyan – PhD in History, Associate professor of chair of Armenian Church History and Ecclesiology at the YSU Faculty of Theology